ԲՄԿ ՊՈԻՀ ՌՈԻՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝
Իրավունքի Ինստիտուտի
տնօրեն
Մ. Ա. Քալաշյան

ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
МИНИСТЕРСТВО НАУКИ И ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ РФ
РОССИЙСКО-АРМЯНСКИЙ (СЛАВЯНСКИЙ) УНИВЕРСИТЕТ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ПРАВА

« 04 » հուլիսի 2025 թ

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի Ձեռնարկատիրական իրավունքի և մարդու իրավունքների իրավական կարգավորումը

*Հեղինակ՝ դասախոս Դավթյան Անի Մայիսի*

# *ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ*

*Դասընթաց՝ Մտավոր սեփականության իրավունք*

Մագիստրոսի կրթական ծրագիր՝ 042101.05.7 «Գործարարական իրավունք»

Դասիչ մասնագիտություն՝ 042101.00.7 «Իրավագիտություն»

**Դասընթացի անոտացիան**

Դասընթացը նվիրված է մտավոր սեփականության իրավունքի տեսական և գործնական հիմքերի ուսումնասիրությանը՝ շեշտադրելով դրա նշանակությունը ժամանակակից ձեռնարկատիրական գործունեության մեջ:

Քննարկվում են հեղինակային և հարակից իրավունքները, արդյունաբերական սեփականության օբյեկտները (արտոնագրեր, ապրանքային նշաններ, արդյունաբերական դիզայն), ինչպես նաև դրանց պաշտպանության մեխանիզմները:

Դասընթացը միտված է զարգացնելու ուսանողների կարողությունները՝ կիրառելու ինտելեկտուալ սեփականության իրավունքի նորմերը բիզնես միջավայրում:

**Դասընթացի նպատակը և խնդիրները**

Դասընթացի նպատակն է ուսանողներին տրամադրել համակարգային գիտելիքներ մտավոր սեփականության իրավունքի վերաբերյալ և ձևավորել գործնական կիրառման հմտություններ:

Դասընթացի շրջանակներում լուծվում են հետևյալ խնդիրները.

- բացահայտել մտավոր սեփականության իրավունքի համակարգը և սկզբունքները
- ներկայացնել տարբեր օբյեկտների իրավական կարգավորումը
- ուսումնասիրել իրավունքի պաշտպանության մեխանիզմները
- զարգացնել իրավաբանական վերլուծության և կիրառման հմտությունները
- ձևավորել բիզնեսում մտավոր սեփականության իրավունքի կիրառման կարողություն

**Դասընթացի օբյեկտը և առարկան**

Օբյեկտը՝ մտավոր սեփականության ոլորտում առաջացող հասարակական հարաբերությունները:

Առարկան՝ այդ հարաբերությունները կարգավորող իրավական նորմերը, ինստիտուտները և կիրառական պրակտիկան:

**Դասընթացի մուտքային պահանջները**

Դասընթացը յուրացնելու համար անհրաժեշտ է՝

- քաղաքացիական իրավունքի հիմունքների իմացություն
- պայմանագրային իրավունքի հիմքեր

• ձեռնարկատիրական իրավունքի նախնական գիտելիքներ

**]Դասընթացի յուրացման արդյունքում ձեռք բերվող գիտելիքները և կարողությունները**

**Դասընթացի յուրացման արդյունքը ապահովում է անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների ու կարողությունների համապատասխան ՈԱԾ-ի վերջնարդյունքներին:**

*Գիտելիքները*՝

1. Մտավոր սեփականության իրավունքի հասկացությունը և համակարգը
2. հեղինակային և արդյունաբերական սեփականության իրավական կարգավորումը
3. Մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության մեխանիզմները

*Հմտությունները*՝

*1)գիտելիքի կիրառման հմտությունները*՝

*2) իրավական նորմերի կիրառություն կոնկրետ գործերում*

*3) պայմանագրերի կազմում մտավոր սեփականության ոլորտում*

ընդհանրական իմացական հմտությունները՝

*1) իրավական վերլուծություն և քննադատական մտածողություն*

*2) գործնական խնդիրների լուծում*

*Կարողունակությունը (կոմպետենցիան)*՝

- ***ինքնուրույնությունը և պատասխանատվությունը***՝

1. ինքնուրույն որոշումների կայացում իրավական հարցերում
2. պատասխանատվություն իրավաբանական եզրակացությունների համար

**Դասավանդման եղանակները և մեթոդները**

• դասախոսություններ

• սեմինար քննարկումներ

• գործնական դեպքերի (case study) վերլուծություն

• հետազոտական աշխատանքներ

• դատախաղեր (mootcourt) և խմբային աշխատանք

**Դասընթացի տեղն ուսումնական ծրագրում**

Դասընթացը ներառված է «Մտավոր սեփականության իրավունք »՝ 3 ակադեմիական կրեդիտ (32 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 16 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 1  ուսումնական տարվա 1 կիսամյակում:

| Ուսումնական աշխատանքի տեսակները | Ընդամենը, ակադ. ժամեր |
|---|---|
| **1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝** | **108** |
| 1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝ | **32** |
| 1.1.1. Դասախոսություններ | **16** |
| 1.1.2. Գործնական պարապմունքներ, այդ թվում՝ | **16** |
| 1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ | |
| 1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝ | **76** |
| 1.2.1. Քննություններին նախապատրաստում | **30** |
| 1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝(նշել) | **46** |
| 1.2.2.1. Գրավոր ինքնուրույն աշխատանքներ | **20** |
| 1.2.2.2. Էսսե և ռեֆերատներ | **26** |
| Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք) | **ստուգարք** |

**Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների**

| Առարկայի բաժինները և թեմաները | Ընդամենը | Դասախոսու-թյուններ | Գործնական / սեմինար պարապմունքներ |
|---|---|---|---|
| **1** | **2=3+4** | **3** | **4** |
| **Թեմա 1. Մտավոր սեփականության իրավունքի ընդհանուր դրույթներ** | **6** | **3** | **3** |

| | | | |
|---|---|---|---|
| **Թեմա 2. Հեղինակային իրավունք** | **6** | **3** | **3** |
| **Թեմա 3.Ա տոնագրային իրավունք** | **6** | **3** | **3** |
| **Թեմա 4. Ապրանքային նշաններ և բրենդինգ** | **6** | **3** | **3** |
| **Թեմա 5. Լիցենզավորման պայմանագրեր** | **4** | **2** | **2** |
| **Թեմա 6. Իրավունքի պաշտպանություն** | **4** | **2** | **2** |
| **Ընդամենը** | **32** | **16** | **16** |

**Դասընթացի թեմաների բովանդակությունը**

**Թեմա 1.**

Մտավոր սեփականության հասկացություն, տեսակներ, իրավական աղբյուրներ:

**Թեմա 2.**

Հեղինակային իրավունք, օբյեկտներ, սուբյեկտներ, իրավունքների ծավալ:

**Թեմա 3.**

Արտոնագրեր, գյուտեր, օգտակար մոդելներ:

**Թեմա 4.**

Ապրանքային նշաններ, բրենդներ, մրցակցություն:

**Թեմա 5.**

Լիցենզավորման և փոխանցման պայմանագրեր:

**Թեմա 6.**

Իրավունքի պաշտպանություն, դատական և արտադատական մեխանիզմներ:

## *Դասընթացի ապահովվածությունը գրականությամբ*

1. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք
2. WIPO Intellectual Property Handbook
3. Cornish, Llewelyn – Intellectual Property: Patents, Copyright, Trademarks
4. ՀՀ «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենք
5. TRIPS Agreement